

ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Գրիգորյանն անցկացրեց աշխատանքային խորհրդակցություն

2015 թվականի մարտի 6-ին ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Գրիգորյանն անցկացրեց խորհրդակցություն մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության, հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ղեկավարների հետ: Քննարկվեցին մարզպետարանի կողմից համայնքներում իրականացվող վարչական վերահսկողության աշխատանքների կազմակերպման հետ առնչվող հարցեր:

Վարչական վերահսկողություն իրականացնող հանձնաժողովին հանաձնարարվեց մարզի ինը համայնքներում կատարել ուսումնասիրություններ: Աշխատանքների արդյունքները պետք է ներկայացվեն մինչև սույն թվականի մարտի 25-ը:

